20.10.2021թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 033736/09
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, ուսումնասիրելով 20.10.2021 թվականի թիվ 33736վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Անհատ ձեռնարկատեր Տիգրան Տալոյանը (ՀՎՀՀ՝ 47823121, հասցե՝ Արարատի մարզ, Արալեզ, Ա. Իսահակյան փող. 3) ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2021 թվականի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

Այն փաստը, որ Տիգրան Տալոյանը վերջին մեկ տարվա ընթացքում կատարել է իրավախախտում, որի համար ենթարկվել է վարչական տույժի (ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 20.08.2021թ-ի թիվ 030969/09 որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34, 244[2], 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի՝ Տիգրան Տալոյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20 000 (քսան հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելո ւմասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. 900005240487՝ վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանք ընշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:
Ստացա որոշման պատճենը_____